

Թէ՛ ինքն ճշմարտապէս եպիսկոպոս է եւ հայ կաթողիկէ եկեղեցւոյ կը վերաբերի առանձինն ուշադրութեան արժանի են սա խօսքերն՝ «որ եկեալ էր առ իս նամակաւ եւ հրամանաւ փոխանորդ(ի) Եպիսկոպոսի ի վերայ ազգիս Հայոց՝ Տեառն Յովհաննու եւ որդի փրովականտայի... այս է գիր եւ վկայական նամակ սիրելի որդւոյ իմոյ Տէր Մեսրոպին... որ է որդի Ընդհանրոյ սուրբ եկեղեցւոյ Հռոմէականի...»։ Դարձեալ՝ «Եւ ես ետու զմասնաւոր գաւազան ստամպոլցի Արապ Քեահեայ օղու կոչեցեալ որդեկին իմոյ, եւ ջատագով ճշմարտութեան, քանիքուն հետեւող ուղղութեան...»։

Արդ, նիկոմիդացի Յովհ. Ա., որ այն ժամանակներ Պոլիս, լատին Եպիսկոպոսն քով՝ փոխանորդ (վեքիլ) էր կաթողիկէ Հայերը խնամելու որոշուած, շատ ծանօթ անձ է, աշակերտ Դպրանոցի Ս. Ժողովոյ տարածման հաւատոյ, վարդապետ Աստուածաբանութեան, ունի հայերէն հրատարակութիւններ, արեւելք միսիոն կատարելէն ետեւ՝ Վենետիկ եւ Հռոմ անցուցած է կեանքը։ Սոյն փոխանորդը Մեսրոպայ եւ Աթանասայ վկայականներ կու տայ եւ կը ղրկէ Դեւոցայ վանքի Առաջնորդ Աբէլ Արքեպ.ին, որ զիրենք քահանայ ձեռնադրէ, որմէ կ'ենթադրուի թէ հաստատապէս ստոյգ է Աբելի կաթողիկէութեան վրայ։ Աբէլ սոյն յարաբերութեան մէջ գտնուելով՝ անոր վկայագիրները կ'ընդունի եւ ի մասնաւորի